

Miami

Ապրիլ 12, 1951

Մեծայարգ  
Տօքթ. Յ. Լուսինեան  
Ատենապետ Պատ. Հոգաբարձութեան  
Մայամիի Համայնքին.

Մեր փոխանորդ Հոգշ. Տ. Շնորհք Վրզ. Գալուստեանը Համայնքի գտուած իր այցելութեան եւ կատարած ծիական կազմակերպչական աշխատանքներու մասին ներկայացուց մեզ իր տեղեկագիրը, զոր նկատի առինք Կեզր. Վարդութեան մէջ:

Նախ Կ'ուզենք մեր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնել որ Մայամիի մեր ծուխը վերջապէս ունեցաւ իր անկախ եկեղեցւոյ շէնքը, որուն անհրաժեշտ փոփոխութիւններն ու կահաւորումը կատարելէ ետք իր ուրոյն եկեղեցւոյն մէջ պիտի կարենայ պաշտել զԱստուած, բարձր պահելով մեր նախնեաց Հայ Բրիտանացական Հաւատքը, մեր Մաք եկեղեցւոյն եւ Տիրոջը փառքին համար:

Կ'ուզենք նաեւ յայտնել մեր խորին գթահատութիւնը եկեղեցական Յանձնախումբի բոլոր անդամաց, որոնց եռանդուն եւ նուիրեալ աշխատութեանց շնորհիւ կարելի եղաւ յաջողութեամբ պսակել ակսուած գործը:

Համաձայն մեր փոխանորդի տեղեկագրին, Մարտ 11-ին իր նախագահութեամբ գումարուած է Համայնքի օրինաւոր անդամական ժողովը եւ կատարուած է կանոնական Հոգաբարձական ընտրութիւն, եւ ներկայացնելով նոր կազմը Կը խնդրէր վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն իրրեւ եկեղեցւոյ գ նախանձախնդիր, անձնուէր եւ պատուական անդամներ, կը վաւերացնենք ու կը հաստատենք անոնց ընտրութիւններն ու պաշտօնները հետեւեալ կարգով.-

Տօքթ.	Դովսէփ	Լուսինեան	Ա. Ատենապետ
"	Գրիգոր	Կէօկէրեան	Բ. Ատենապետ
	Միսակ	Մուսնեան	Գանձապահ
Տօքթ.	Միհրան	Տոլմեճ	Ատենադպիր
Պր.	Արամ	Մարլեան	Օգնական գանձապահ
"	Օննիկ	Թիւլհանեան	Խորհրդական
"	Յարութիւն	Զաքարեան	"
"	Յակոբ	Փիլաճեան	"
"	Տիրան	Մուսնեան	"

Սոյն վաւերացումով նախկին Եկեղեցական Մարմինը կը դադրի  
իր պաշտօնէն եւ Ձեր ծուխը կը դառնայ մեր թեմի օրինաւոր Համայնքներէն  
մին, եւ որպէս այդպիսին՝ ունի որոշ պարտականութիւններ եւ պարտա-  
ւորութիւններ որոնք պիտի կատարէ, ինչպէս թեմիս միւս Համայնքները:

Ատոնցմէ մին է թեմական Տուրքը: Յայտնի է Ձեզ թէ՝ Առաջնորդարանի  
կարիքները մասամբ կը հոգացուին մեր Համայնքներուն վրայ դրուած թեմական  
տուրքերով: Այսու կը յայտնենք թէ՝ Ձեր Համայնքին տուրքի սակը նշանակուած  
է ամսական 10/Տաւր/ տուար, որ ամէն ամսու վերջաւորութեան պէտք է ղրկէք  
Առաջնորդարան:

Կը հրահանգենք նաեւ որ առաջին Հարաւոր առթիւ՝ որպէս օրինաւոր  
Համայնք ընտրէք Ձեր երեսփոխանը, մասնակցելու Համար յառաջիկայ Հոկտեմ-  
բերին գումարուելիք երեսփոխանական ժողովին:

Ներփակ կը ղրկենք նաեւ Ձեր Համայնքը ինքզինքրէ յիշ ընելու վերա-  
մրշակուած ձեւը՝ որ յարմարցուած է նահանգի եւ Պաշտօնագրութեան օրէնք-  
ներուն, ըստ այնմ ձեւաւորելու եւ արձանագրել տալու Համար:

Կը յանձնարարենք որ Ձեր բոլոր գործունէութեանց ընթացքին  
հետեւիք եւ գործադրէք մեր թեմական կանոնագրութիւնը որպէսզի դժուարու-  
թեանց չենթարկուիք:

Կ'օրհնենք նորընտիր Հոգաբարձութեանը բոլոր անդամները եւ կը  
մաղթենք որ ունենաք արգիւնաւոր գործունէութեան շրջան մը, ի պայծառու-  
թիւն մեր սուրբ Եկեղեցւոյ եւ ի փառս Աստուծոյ:

Հայրական սիրոյ ողջունիւ  
Մնամք աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

*Կր. վ. Մ. Մ. Մ.*

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՅԱՄԻԻ ՄԵՋ

Գերաշնորհ  
Տ. Տիրան Եպս. ներսոյեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան  
նիւ Եորթ.

Սրբազան հայր,

Նկատի ունենալով որ Մայամիի Հայութիւնը ունեցաւ իր սեպհական  
եկեղեցին եւ օրինաւոր համայնք մը կամ ծուխ մը ըլլալու ճամբուն մէջ  
մտաւ, գործնականապէս, հարկ տեսանք լուծել ցարդ գործող "Եկեղեցական  
Մարմինը" եւ կազմել ծխական ժողով եւ ընտրել տալ հոգաբարձական կազմ  
Մայամիի մէջ:

Տեղւոյն եկեղեցական մարմնոյն հետ խորհրդակցաբար՝ Մարտ 11-ի Կի-  
րակին յատուկ շրջաբերականով տեղւոյն Քրայ համայնքը պաշտամունքի եւ  
ծխական ժողովի մը հրահրեցի:

Յաւարտ ժամերգութեան, բացատրութիւններ տուի նախ մեր թեմական  
կազմակերպութեան մասին, ապա ներկաներէն խոստում առնելէ վերջ թէ կը  
փափաքին անդամակցիլ եկեղեցւոյն, եւ ճշդելէ վերջ թէ կը լրացնեն իրաւասու ան-  
դամի մը բոլոր պայմանները/բացի իրենց անդամատուրքը վեց ամիս առաջ վճարած  
ըլլալու պայմանին/ներկաները Մայամիի առաջին ծխական ժողով հռչակեցի, եւ  
հրահրեցի որ ընտրեն իրենց ծխական խորհուրդը: Ներկայ էին 30 ~~երկուսու~~  
անդամներ: Ընտրեցին ծխական ժողովի որպէս ատենապետ Պր. Ս. Օհանեան եւ  
Ատենադպիր Գ. Կէօկէրեան:

Ծխական ժողովի անդամներէն մին առաջա րկեց. որ նկատի ունենալով որ  
եկեղեցական Յանձնախումբը իր գործը շատ յաջող կատարած է ցարդ, թէ գործնա-  
կան եւ թէ գնահատական պատճառներով անոնք վերընտրուին ամբողջ կազմով եւ  
երկու նոր անդամներու յաւելումով: Յանձնախումբի վերընտրութիւնը միաձայն  
եւ բաց քուէով եղաւ. իսկ երկու նորընտրու զաղտնի քուէով, չորս հոգինոց  
անուանացանկի մը վրայէն: Ընտրուեցան Տիրան Մօմճեան եւ Գրիգոր Կէօկէրեան:

Ծխական ժողովէն անմիջապէս վերջ գումարեցի հոգաբարձական ժողով  
որ իր դիւանը ընտրեց հետեւեալ կազմով:—


Տոքոս.	Յովսէփ	Լուսինեան	Ա. Ատենապետ
Պր.	Գրիգոր	Կէօկէրեան	Բ. Ատենապետ
"	Սիսակ	Մամճեան	Գանձապահ
Տոքոս.	Տոլմեճ		Ատենադպիր
Պր.	Արամ	Մսրլեան	Օգնական գանձապահ
"	Օննիկ	Ժիւլ հանճեան	Խորհրդական
"	Յարութիւն	Զաքարեան	"
"	Յակոբ	Փիլաթեան	"
"	Տիրան	Մամճեան	"

Հոգաբարձութեան յանձնարարեցի որ իրենց գլխաւոր գործերը պիտի  
ըլլան, ա/եկեղեցին ներկել, նորոգել, յարդարել, խորանները շինել տալ եւ  
զայն պատրաստ ունենալ օծման համար) Եթէ Աստուած կամենայ, 1952 նոր Տարիին:  
Համար: Բ/Անմիջապէս սկսիլ Կիրակնօրեայ վարժարանի մը եկեղեցիին մէջ: Գ/ձեռ-  
նարկել անդամաւորակալ արջաւի: Դ/Նախկին յանձնախումբը իր ցարդ ունեցած

գործունէութեան ընդհանուր տեղեկագիրը յղեն Առաջնորդարան:

Հաղորդելով զայՍոսիկ Ձեր Սրբազնութեան ի տեղեկութիւն, կը  
խնդրենք հոգաբարձական այս կազմին հաստատումը:

Խոնարհ ազօթակից

  
Մնորհք Վրդ. Գալուստեան

r Dade  
Sunday  
ice Sun-

will be too heavy for you and break yo  
to and concern and worry about days th  
ne thought for the morrow," the Bible s  
fourth spend a few minutes every da  
Gal. 5) Live the best life you can  
you can do that, it won't be long until yo

*Wesleyan Herald*  
**Armenian Parish  
Organization Set**

**Wes  
Reg**

Organization of an Armenian  
parish will take place after the  
10:30 a. m. service Sunday in  
the building which the Armeni-  
an community has acquired at  
NE First ave. and 15th st. The  
Very Rev. Shnork Kaloustian,  
vicar of the Primate of the Ar-  
menian Church of America, will  
officiate.

West  
SW 75th  
was for  
sponsor  
an, will  
of serv  
School  
worship  
The R  
S. W. M  
uel will  
tor is a  
building  
until pe  
quired.

The Armenian community,  
which has been holding holiday  
services at Holy Cross Episcopal  
Church, held its first services  
last Sunday in the building. Har-  
ry Burt and Dr. Joseph H. Lu-  
cinian headed the committee  
which raised funds for its pur-  
chase.

**Serm**

Y  
ouncil  
esday  
s will  
at 11  
Alli-  
sbord  
"Half  
oseph  
Sun-  
" is  
ation  
y.  
the